



Թի 26

ՅՈՒՆԻՍ Ա. 2019

ԱՆՕԹԻ ԳԱՅԼԸ

Արմեն Սարգիսեան

Յուրտ ձմեռ էր, բուք ու բորան: Սոված գայլ մը, հոգին բերանը եկած, ոտքերը հազիւ շարժելով, ձիւնածածկ սարալանջէն ոռնալով կ'անցներ:

Դիմացի գիւղի եկեղեցիին բակին մէջ խմբուած, կուշտուկուռ կերած խմած մարդիկը գայլին ոռնոցները սապէս կը մեկնաբանէին:


- Կը լսե՞ք, կը լսե՞ք, տնաշէնը ի՞նչ ցնծութեան մէջ է. ո՛վ գիտէ, թէ ո՛ր խեղճին տունը քանդած է: Անպիտանը այնքան շատ կերած է, որ նոյնիսկ չի կրնար քալել...

Այդ պատճառով կ'ըսեն.
«Կուշտն ի՛նչ գիտնայ անօթիին վիճակը»:



ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿԸ

Արթաբէկ Խնկոյեան



Փոքրիկ գառնուկ մը առուակէն ջուր կը խմէր: Մէկ ալ դիմացի ձորէն կը հասնի գայլ մը ու այսպէս կը խօսի:

- Այս ի՞նչ անկրթութիւն է, Ա՛յ դուն խլլոտ, Ի՞նչ իրաւունքով Գաս աղտոտ դունչով Բիթով-բերանով Ջուրս պղտորես, Զիմա պիտի գամ Ու սեղմեմ վիզդ, Որ կտրի դունչդ:

- Մի՛ բարկանար, պարո՛ն գայլ, Ես քեզմէ քանի՛ քայլ վար կը գտնուիմ, Ինչպե՛ս կրնամ ջուրդ պղտորել:

- Ուրեմն ես սո՛ւտ կը խօսիմ, ա՛յ լիկած, Տակաւին չեմ մոռցած անցեալ տարուանը, Երբ ճի՛շդ այստեղ, ա՛յս օրս, Զայիոյցիք իմ հօրս:

- Բայց ես տակաւին մէկ տարեկան իսկ չեմ...
- Ուրեմն եղբայրդ էր հայիոյողը:
- Բայց ես միամօր եմ, եղբայր-քոյր չունիմ:
- Ուրեմն ազգական մըն էր: Կամ ձեր աղտոտ ցեղէն ուրիշ մէկը: Զըլլա՛յ որ տեղեղ շարժիս, Ձեր հովիւներուն ու շուններուն ոխը Զիմա քեզմէ պիտի առնեմ, Տե՛ս՝ գլխուդ ի՛նչ պիտի բերեմ Այսպէս ըսաւ ու հասաւ գառնուկին, խլեց գայլն ու թռաւ, անտառ տարաւ:

Այս առակը կը սորվեցնէ, որ զօրաւորին առջեւ տկարը միշտ յանցաւոր է:



ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՈՒՌԱՅ ԿԱՐԵԱՆ-ՏԻՔՄԻՔԵԱՆ ՆԿԱՐԱՉԱՐՈՒՅՑ՝ ՈՒՅՅԻ ՔԵՇՈՒՅԵԱՆ

ԱՆՅԱԲԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱՒ...

* Լուիկները արեւմտեան աշխարհի հասան հարաւային Ամերիկայէն, 16-րդ դարուն: Մեծ թիւով մարդիկ կը հաւատային, որ լուիկը թունաւոր է, եւ կը գործածէին միայն իբրեւ զարդ:

* 100 անձերէ մօտաւորապէս 9-ը չեն կրնար բոլոր գոյները զանազանել: Այս երեւոյթը աւելի տարածուած է այր մարդոց մօտ, քան՝ կիներուն:

* Սըր ճորճ Սիթուէլ հարուստ ազնուական մըն էր, որ իր ժամանակը կ'անցընէր արտասովոր գիտեր կատարելով ինչպէս, օրինակի համար, մեղուները մեռցնելու յատուկ փոքրիկ ատրճանակ մը:

* Հտպիտներուն միջեւ գոյութիւն ունի անգիր օրէնք մը, որուն հիմամբ հտպիտ մը իրաւունք չունի ընդօրինակելու այլ հտպիտի մը դիմայարդարումը: Ասիկա անհաւատալի կրնայ թուիլ, բայց կրկեսի հտպիտները իրենց դիմայարդարումի զարդարանքը «կ'արձանագրեն» զայն գծելով հակիթի մը վրայ, որ կը պահուի հտպիտի հակիթի դէմքերու կեդրոնական հաւաքածոյի մը մէջ: Այս սովորութիւնը սկսած է Անգլիոյ մէջ 1946-ին եւ հոնկէ տարածուած է աշխարհի շուրջ:

* Չիլիի Աթաքոմա անապատը ծովու մակերեսէն շատ բարձր է եւ աշխարհի ամենէն չոր վայրը կը համարուի, Անթարքթիքայէն ետք: Այդ անապատին ընդարձակ տարածքի կարգ մը վայրերու մէջ բնաւ չէ անձրեւած:



ԺՈՂՎՐԴԱՅԻՆ ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ԳԻՏԵ՞Ք


Հետեւեալ ասացուածքներուն մէջ բառ մը կը պակսի: Փորձեցէ՛ք ամբողջացնել զանոնք օգտուելով ներքեւի բառերէն:

ծարաւ-դժուար-գին-կարիք-լուծութիւն-խուլ-թշնամի-խայտառակ

- 1.- Անգին քարը ցեխին մէջ ալ ունի:
- 2.- Ամէն տարիք ունի
- 3.- Մեծին մէկ աջը կոյր, մէկ ականջը պետք է ըլլայ:
- 4.- Մարդու սիրտը ապակիէ շինուած է, դիւրին է գայն կոտրելը, շինելը՝
- 5.- Հարստութիւնը կը նմանի աղի ջուրին, որքան աւելի խմես՝ այնքան աւելի կը դառնաս:
- 6.- Անճարակ մարդ, կ'ըլլայ
- 7.- Այսօրուան բարեկամը գուցէ վաղը կը դառնայ:
- 8.- Ամենապերճախօս լեզուն, է:

ԿՐՆԱ՞Ք ԱՄԲՈՂՋԱՅՆԵԼ ԲՈՒՐԳԸ

Փորձեցէ՛ք ամբողջացնել վարի քառակուսիները: Իւրաքանչիւր քառակուսիի թիւը կը ներկայացնէ իրմէ վար գտնուող երկու քառակուսիներու թիւերուն գումարը:



ՄԵՂՈՒՆ ՈՒ ՄՂԱՄԻՆԻՆ

Ղազարոս Աղայեան



Ժրաջան մեղուն ծաղկառատ դաշտին մէջ իր մեղրին համար հիւթ կը հաւաքէր: Արեւուն տակ շատ աշխատելէն՝ ան ձանձրացաւ ու ծարաւցաւ:

Անոր մօտ կը գտնուէր փոքրիկ լիճ մը: Մօտեցաւ լիճին, թառեցաւ ափին, որ քիչ մը ջուր խմէ, ծարաւը յագեցնէ, նոր ուժ ստանայ եւ թռչի տուն երթայ:

Հագիւ ծռած էր, որ ջուր խմէ, յանկարծ գլորեցաւ ու ինկաւ ջուրին մէջ: Ան շատ փորձեց ցամաք ելլել, բայց փոքրիկ ալիք մը զինք ներս քաշեց եւ անելի հեռացուց ափէն:

Այսպէս խեղճ մեղուն ցամաքէն զրկուեցաւ ջուրին երեսը թելերը փռեց եւ յոյսը կտրած սպասեց:

Ուրկէ-ուր անոր օգնութեան հասաւ բարեսիրտ սիրուն աղանի մը: Բարի աղանին մօտեցաւ լիճին եւ տեսաւ մեր խեղճ մեղուն՝ յուսահատ փռուած ջուրին երեսին: Իսկոյն աճապարեց, տերեւ մը փրցուց եւ բերաւ մեղունին առջեւը ձգեց:

Մեղուն ելաւ տերեւին վրայ, ուշքը հաւաքեց, ասդին-անդին նայեցաւ, որ տեսնէ՝ ո՞վ էր զինք ազատողը, մահէն փրկողը:

Եւ իր քով տեսաւ բարի աղանին: Շատ նայեցաւ անոր եւ ուզեց խօսիլ, աղանին գովել, շնորհակալութիւն յայտնել, բայց մեր բարեսիրտ աղանին շատ լաւ հասկցաւ մեղունին միտքը եւ չուզեց լսել անոր գովասանքը, այլ թռաւ-զնաց որպէսզի ուրիշներուն ալ օգնէ:



Օր մը այս մեղուն նոյն դաշտին մէջ սիրուն ծաղիկէ մը հիւթ կը քաղէր եւ տոզալով կը գովէր աղանին: Մեղունին դիմաց՝ ծռած մը վրայ, նըստած կը ննջէր իրեն ծանօթ աղանին: Ճիշդ այդ պահուն մեղուն նկատեց, որ ահա մարդ մը, հրացանը ձեռքին, մէջքը ծռած, չար օձի պէս սուսիկ-փուսիկ կը սողար դէպի աղանին: Մեղուն հասկցաւ, որ ան չար մարդ մըն էր, անգութ որսորդ մը, որ կ'ուզէր սպանել անմեղ թռչունը՝ իր բարերարը: Եւ իրապէս ալ ա՛յդ էր այն մարդուն նպատակը:

Որսորդը ծունկը գետին դրաւ, անշարժացաւ եւ հրացանը երեսին բռնեց:

Հագիւ մատը դրած էր բլթակին եւ կ'ուզէր քաշել զայն ու որսալ աղանին, ճիշդ այդ վայրկեանին մեղուն կայծակի պէս վրայ հասաւ եւ չար որսորդին ձեռքը այնպէս մը խայթեց, որ ան ցաւէն վեր ցատկեց, հրացանը նշանէն շեղեցաւ, եւ թնդիւնէն անմեղ աղանին քունէն արթնցաւ ու տղէն թռաւ:

Այսպէս մեր մեղուն իր բարերարը փրկեց ու ազատեց վերահաս մահէն:





ԿԵՐՊՆԿԱԼԷ ՏՈՊՐԱԿՆԵՐԸ ԱՐԳԻԼՈՒԱԾ ԵՆ

Չիլի դարձած Է Հարաւային Ամերիկայի առաջին երկիրը, որ կ'արգիլէ կերպընկալե* տոպրակներուն գործածութիւնը սուփըմարքեթներուն մէջ: Ասիկա իսկական յեղաշրջում մըն է այս երկրին մէջ, ուր ամէն տարի կը գործածուին 3.4 միլիառ կերպընկալէ տոպրակներ, որոնք յաճախ իրենց կեանքը կը վերջացնեն ծովուն մէջ:

Աշխարհի մէջ մօտաւորապէս վաթսուն երկիրներ արդէն արգիլած են կրպընկալ տոպրակներու գործածութիւնը:

*Կերպընկալ - *plastic*



ՉԱՆԱՉԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ԱՇԽԱՏՅՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու Նիւ Եորք քաղաքին մէջ գտնուող այս խաղավայրին մէջ գոյութիւն չունին սահնակներ կամ օրօրոցներ: «Իմաճինէյշըն Փլէյրաունտ» խաղավայրին մէջ կարելի է գտնել կակուղ նիւթերէ շինուած տարբեր չափերով եւ ձևերով շինարարութեան տարբեր կտորներ:

Հոն ապագայի ճարտարապետները ազատութիւնը ունին շինելու տարբեր բաներ՝ գործածելով այդ կտորները եւ հոն գտնուած տարբեր նիւթերը, ինչպէս՝ պարաններ, անիւներ, սնտուկներ:



ԵԱՆԿ ԵԱՆԿ ՆԿԱՐԻՉ ՓԱՆՏԱՆ

Եանկ Եանկ եգ փանտա մըն է, որ կ'արի Աւստրիոյ Շոնարոնի կենդանաբանական պարտեզին մէջ: Ան ունի նախասիրած ժամանց մը, նկարչութիւնը:

Իրեն համար յատուկ շինուած պամպու եղեգէ վրձինով մը ան օրական կ'արտադրէ երեքէն ութը «գեղանկար»:

Իւրաքանչիւր նկար վերջացնելէ ետք իրմով զբաղող անձերը անոր քանի մը կտոր բանջարեղէն կու տան՝ զայն քաջալերելու համար: Անոր գործերը ծախու դրուեցան համացանցի վրայ 460 եւրոյի: Այս ձեւով հաւաքուած դրամը պիտի գործածուի տպելու համար փանտաները պահպանելու ի նպաստ գիրք մը: